ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հոկտեմբերի 2023 թվականի N 398-Ա

ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՌՆԻՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՅԱՆՎԱԾ ԲԵՌՆԱՏԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԸ ԲԵՌՆԱԹԱՓԵԼՈՒ ԵՎ ՊԱՀԵՍՏ ՎԱՐՁԱԿԱԼԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետի 09.10.2023թ. զեկուցագիրը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Տեղ համայնքի Կոռնիձոր բնակավայրի հարակից տարածքում կայանված թվով 17 (տասնյոթ) բեռնատար ավտոմեքենաների՝ Գորիս համայնքում բեռնաթափելու և մեկամսյա ժամկետով պահեստ վարձակալելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N 1657-Ն որոշման 01 բաժնի 08 խմբի 01 դասի 08՝ «Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձանց համար առաջնային անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների ծախսերի համար» ծրագրով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմի համար նախատեսված ծախսերի «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով սահմանված ֆոնդից հատկացնել 775 000 (յոթ հարյուր յոթանասունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով ապահովել վերոնշյալ գումարի վճարումը Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության փորձագետ Ռազմիկ Ավետիսյանի հաշվեհամարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնելու նպատակով:

3. Հանձնարարել Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության փորձագետ

Ռազմիկ Ավետիսյանին՝ որոշմամբ նշված աշխատանքներն ավարտելուց հետո եռօրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

Հաստատված է էլեկտրոնային ստորագրությամբ

2023թ. հոկտեմբերի 10
ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290